

10. Նոյն տարին ներկայանալով Նապոլեոն Գ.ի՝ ստացաւ Ռսկի Միտալ:

11. Սուլտան Ապտուլ-Ալիզ շնորհեց «Օսմանիէ» ազամանդազարդ շքանշանը:

12. Առթիւ նկարչական գործունէութեան Յիւնամեակին Պետերբուրգի Ակադեմիան առաջնեց զինքը «Պատուոյ Անդամ». եւ ի պատիւ նկարչին Միտալ կտրեց:

13. Վաթնամեակի տօնախմբութեան առթիւ անուանուեցաւ «Գաղտնի Սորհրդական». Նիկողայոս Բ. պատուեց «Աղեքսանդր Նեւսիկ» շքանշանով:

Շքանշաններու, Պատիւներու եւ Տիտղոսներու այս թիւը անշուշտ լրիւ չէ: Անոնք չչլացուցին համեստ նկարիչը, եւ ոչ ալ թուլացուցին անոր ձեռքերը: Վրճինը, որ ծնիչն էր իր փառքին, մնաց իր մատներու մէջ մինչեւ կեանքին վերջը: Սիրեց աշխատանքը. փառքը բնկերացաւ արտադրութիւններուն:

Գեղեցիկ ըսած է իրեն համար Թէոփիլ. «Կարելի է անխնայ դրուատել զինքը, որովհետեւ դրուատիքն իրեն համար վտանգաւոր չէ»¹:

ԻԸ.

ԾԱՂԿԵՓՈՒՆՁ

ՀԱՆՃԱՐԻ ԿԵԱՆՔԷՆ ՈՒ ԳՈՐԾԵՐԷՆ

Այվազովսկի օր մը ծովափին կը նկարէր ձկնորսի մը խրճիթը, պատերէն կախուած ուռկաններով միասին: Ծեր ձկնորսը, որուն կը վերաբերէր տնակը, նկատեց նկարիչն եւ մօտեցաւ անոր. հետաքրքրուած հարցուց, թէ քանի՞ կը նայ ծախել այդ նկարը երբ աւարտէ:

— Գործը զիտէ, պատասխանեց Այվազովսկի, ամէնէն նուազ՝ 5000 ռուբլի:

— Ինծի այդ գումարին կէսը տուէ՞ք, ըսաւ ձկնորսը, ես ձեզի տնակս ալ, ուռկանս ու նաւակս ալ մէկտեղ կու տամ:

Հարցուցին Այվազովսկիին, թէ քանի՞ փոփոխակներ կը նայ յառաջ բերել մէկ տեսարանէն. նա պատասխանեց.

— Ի՛նչ ըսեմ, համարէ 300:

Գ. Բաշինջաղեան հարցուց օր մը թէ ինչո՞ւ Մ... նկարիչը այնքան կը պատուեն,

¹ Ամենուն օրացոյցը, 1912, էջ 238:

որուն արժանի չէ, նա ծիծաղելով պատասխանեց.

— Ուզում են, որ օտարը հայից լաւ լինի:

Երբ Այվազովսկիի ստեղծագործութիւնը զարմանք պատճառեց իր աշխատանքը դիտող հայու մը, եւ սա զմայլած գոչեց «Ի՛նչ բնական տեսարան», աշխատող վարպետը յարեց.

— Իրօք բնութիւնն է եղել իմ վարպետը միշտ, թէեւ պատահել է, որ Երբեմն նրա խորտ ու բորտ կողմերն ուղղելու յանդիմութիւնն եմ ունեցել, արուեստի հմայքը նրան աղղելու համար:

(Վերջ:)

Հ. ԱՆԴՐԵԱՍ ԽԸՐԼԱԳԵԱՆ



Ս Ա Ն Ո Ս Ե Ա Ն Ք

Հանդէս Ա. մ. օր ե ա յ, 1933, էջ 318—333 խօսած էի Ղարախոզեան տոհմին, յատկապէս անոր երկու անդամներու՝ Պետիկ-Պետրոս եւ Սանոս եղբայրներու վրայ, որոնք նշանաւոր հանդիսացած էին Հալէպի եւ Կարնոյ մէջ:

Այն ժամանակ ուշադրութենէս վրիպած էր 1668ին գրուած Յիշատակարան մը Դաւիթ զբնի ձեռքէն, որ լոյս կը սփռէ Սանոսի տան վրայ:

Յիշատակարանս արտագրած է Գարեգին Վ. Սրուանձտեանց փոքրագիր մագաղաթեայ աւետարանէ մը, զոր տեսած է Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցւոյ մէջ¹: Ամբողջութեամբ յառաջ կը բերեմ հոս այս Յիշատակարանը, որ պիտի ընդարձակէ մեր տեղեկութիւնները Սանոսեանց տոհմածառի մասին:


«Սաւճայ Սանոսի որդին Պետրոս Զէլէպին մեծաւ յուսով եւ փափազանաւք ես ծրագրել զսուրբ Աւետարանս ի հալալ ընչից եւ յարդար վաստակոց, յիշատակ իւր եւ հարցն Սանոսին, մարն նանային, հարեղարարն հաւնայ Պետիկին եւ կողակցուն Ղուտրաթին, դստերն Շահնիմարին եւ քուերն նախաքուսինն... ի թվ. ՌՃ. եւ ԺԷ. յունիսի ամսոյ ԻԵ. ձեռամբ Դաւիթ ծրողի»:

¹ Թորոս Աղբար, Բ., էջ 440:

Ուշադրութեան արժանի է որ յիշատակագիրը անտեսած է հոս Սանոսի որդին, ուստի եւ Պետրոսի եղբայրն Սեանդար. եւ զարձեալ Պետրոսի մայրն կ'անուանէ Նանա, մինչդեռ Սքանդարի մայրն էր Շահնիլիք Սաթուն (Հանդ. Ամս., 1933, էջ 332): Պիտի հետեւցնենք թէ պարոն Սանոս երկու անգամ ամուսնացած է. առաջին կինն էր Շահնիլէք, որմէ ունեցած է Սքանդարը, եւ երկրորդն՝ Նանա, որմէ ծնած է ի Կարին՝ Պետրոս:

1678ի յիշատակարանին (տե՛ս անդ 333) համաձայն Պետրոս ունեցած է որդի մը, զոր անուանած է ի յիշատակ հօրը՝ Սանոս: Կ'երեւայ թէ 1668ին դեռ չէր ծնած Սանոս:

ՍԱՆՈՍԵԱՆՑ ՏՈՂՄԱՆԱՌՆ Է ՂՍՏ ԱՅՍՄ



Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



Հ Ի Ն Ե Ր Ե Ի Ո Ս Ե

Այս խորագրի տակ հրատարակ հանեց իւր բազմաթիւ գրական երկասիրութիւններով ծանօթ Երուանդ Շակաղիկ նոր աշխատութիւն մը¹, որ արժանի է ուշադրութեան: Հայաստանի քաղաքներու պատմութեան հետ անձուկ կապուած է երկրին քաղաքական, անտեսական եւ կրթական պատմութիւնը: Իսկ Երեւան մասնաւորապէս նոր դարու սեմոց վրայ կը ցցուի իրբեւ անկիւնաքար մը, որուն շուրջը կը յաճի Կովկասի, բայց յատկապէս հայ կեանքի նոր եւ նորագոյն պատմութիւնը:

Աչըղ Զիւանի երգած է.

¹ ԵՐՈՒԱՆԻ ԾԱՀԱՁԻՁ, Հին Երեւանը: Երեւան 1931, 8⁰, էջ 264 [Հրտ. Մեղրեան ֆոնդի]:

Մեր նահանգի թաղուհին ես, պարծանքն ես. Բարիքներով լեցուն Երեւան քաղաք. Համարեա Կովկասի հողին ես, կեանքն ես. Ունիս բարձր անուն, Երեւան քաղաք:

Այս պատճառաւ ալ ուրախ սրտով կ'ողջունենք Ե. Շահաղիկի երկասիրութիւնը իրբեւ մենագրութիւն, որ առաջին ամփոփ դրութիւնն է նուիրուած այժմեան Սորհրդային Հայաստանի մայրաքաղաքին անցեալ պատմութեան:

«Մենք յաւակնութիւն չունինք եւ չենք ունեցել, կը դրէ հեղինակը, մեր այս աշխատանքը Հին Երեւանի լիակատար, պատմագրական գիտութեան վերջին խօսքին համապատասխան մի գործ համարել, այլ մի փորձ, որ պարունակում է իւր մէջ ազազայում գրվիլիք մի այդպիսի պատմութեան բոլոր տարբերքը» (էջ 5): Այս համեստ խոստովանութեամբ, զոր կ'արձանագրէ հեղինակը գործին սկիզբը, չի տուժեր աշխատութիւնը իր արժէքէն. բայց կը գտնենք հոն համառօտ ուրուագիծը, որուն համեմատ կը խորհի հեղինակը կառուցանել իւր շինուածքը. այս ինքն աւելի շտեմարան մը նկատի ունի պատրաստել, համարելու հոն առողձներ ապագայ մեծագործ շինուածքի մը համար, քան ինքնին այդ շինուածքին հիմը դնել:

Նիւթեր, գործնք հաւաքած է այստեղ, եւ կամ քաղաքի պատմութեան աղբիւրները, գործնք մատնանշած է, պիտի նպաստեն ապագայ պատմագրին՝ նոր լրացումներով եւ վերլուծութիւններով յօրինել Երեւանի իսկական պատմութիւնը: Մինչեւ այժմ անոնք, որոնք փորձած են գրել Երեւանի պատմութիւնը, կատարած են իրենց հետազօտութիւնները առաւելագոյն չափով յեցած գրական աղբիւրներու վրայ, քան պատմութիւնը տեղւոյն վրայ ուսումնասիրելով: Ե. Շահաղիկի աշխատութեան առաւելութիւնն է, որ հողին վրայ գրուած է, ի մերձաւորութեան քաղաքին հինաւուրց յուշակերտներուն: Անշուշտ յուսալի է դեռ այսօր յայտնաբերել Հին Երեւանի մնացորդներէն շատ բան, վերակազմել անոր տեղագրութիւնը, բայց չափազանց պիտի ըլլար պահանջել ալեկարգ վաստակաւորէն, որ բա՛ն ու բրի՛չը ուսին շրջէր անձամբ Երեւանի բաւազակաձեւ կածաններէն կամ թափանցեր ամրածածուկ բակերն «հայաթները» եւ վերհանէր վաղափուլ շէնքերու յատակագծերը, մատնացոյց ընէր Հին աղբիւրները, կամ տար

նկարագրութիւնը նկարակերտ դասընթացներու եւ որմերու: Ասոնք սակայն պէտք է ուսումնասիրուին երիտասարդ ոյժերէ, քանի կայ Հին Երեւանը իւր տեղը:

Պիտի չուզեմ հոս տարրալուծել Ե. Շահազիզի այս գեղեցիկ աշխատասիրութիւնը եւ ոչ ալ միւրի անոր քննադատութեան մէջ: Ուշադիր պիտի ընեմ միայն, թէ Հին Երեւանը կարող էր պատմութեան մէջ աւելի պայծառ երեւան դալ, եթէ աւելի չափով նկատու առնուէին ձեռագրական յիշատակարանները, որոնք կը գտնուին յատկապէս Խորհ. Հայաստանի ձեռագրական Հաւաքածոներու մէջ:

Երեւան անուներ առաջին անգամ կը յիշուի հայ գրականութեան մէջ 607ին, այն Ձեռնարկին մէջ, զոր յունական բաժնի եկեղեցականները տուած էին Արրասամ կաթողիկոսի ընտրութեան առթիւ: Այս Ձեռնարկին մէջ է մէջ այլոց կը յիշուին կից էջմիածնի, Հոփսիմէի, Յովհաննավանքի (Կարբի), Օշականի եւ Եղիվարդի վանահայրերու «Դաւիթ Երեւանայ, Իսմայէլ Գառնոյ, Յունանէս Աւանի, Իսրայէլ Պողոսիանից, Զոյիկ Երեւանայ երէցն էր, իսկ «Ձոյիկ Երեւանից» հաւանորէն հին Այրիվանքի: Անուան «Երեւանայ» եղակի ձեւը ցոյց կու տայ, թէ «վանք» բառին բարդութեամբը չէ կազմուած, ինչպէս է «Երեւանքը»: Երեւան կը գրուի յաջորդ դարերու ձեռագիրներու մէջ նաեւ Արեւան եւ Արաւան: Կազմութիւնը թերեւս ենթադրել տայ Եր- եւ Աւան կրկին արմատները. աւան կը տեսնուի նաեւ Բագաւան եւ Նախճաւան անուններու մէջ: Նիկոլայի բեւեռագիր արձանագրութեանց մէջ յիշուած Երիախնի քաղաքը ուղեց նոյնանցնել Երեւանի հետ, անոր նախնական տեղը ցոյց տալով այժմեան Երեւանէն վերստ մը հեռու, հոն ուր կը տեսնուին Արեւն բերդի աւերակները, Նորքէն ոչ հեռու (Շ., էջ 8—10): Թէ Երեւան Ուրարտեան շրջանին ալ ուղղակիան կէտ նկատուած է, ինչպէս Ժ. Գարէն յետոյ, կը տեսնուի այն բերդերու աւերակներէն, որոնք կառուցուած են ձորաբերաններու առջեւ: Բայց անուան կազմութեան համար նկատի կրնայ առնուիլ նաեւ Ար- (էր-) արմատը. Երեւանէն ոչ շատ հեռու, գէպի էջմիածին տանող ճանապարհի վրայ ցոյց կու տան գեո այսօր լեռ մը, որ Արայի լեռ անունը կը կրէ. Արայաւանն ալ

կարող էր գերաւ Արաւան, Արեւան, Երեւան սղումը կրել դարերու ընթացքին:

Յովհաննէս Դրասխանակերտցի կը յիշէ կրել մը, որ տեղի ունեցած է է. դարուն «Երազաքաղիզն Երեւանի». թէպէտ ըստ պատմադրին այս կոուի մասին իր նախորդները գրած են ընդարձակ, բայց անձանօթ է մեղի դէպքը, եթէ չէ Սեբիոսի ակնարկած արարական արշաւանքն դէպի «Երեւան», որուն բերդին վրայ անօղուտ յարձակում մը կ'ընեն: Բայց Սեբիոսի այս տեղիքը, ինչպէս մտադիր ըրաւ Աւղայրէզեան, պէտք է Առեստավանի մասին իմանալ (ՀԱ., 1926, էջ 587—590):

Երեւանի արուարձաններէն Նորքը կը յիշուի արդէն 1297ին. Սարգիս քահանայ այս թուին Տոնապատճառ մը կ'օրինակէ «Ի գեղաքաղաքս ի Նորքս ընդ հովանեաւ Ս. Ստեփաննոսի» (Ձեռ. էջմ., 522). Եթէ խօսքը հոս ուրիշ համանուն գիւղաքաղաքի մը մասին չէ:

Երեւանի դիրքը առաջին անգամ կը ճշգէտ Տիրացու քահանայ իր կրկին յիշատակարաններու մէջ. 1336ին կը գրէ.

«Ես Տիրացու... քահանայ... ի գաւառէն Արտաշատի, ի քաղաքէն Երեւանի, որդի Սարգիս քահանայի, որբեւերի խեղճ ու լայի, յօտար աշխարհս այս եկի, ի Դրեմ քաղաքս Աւգպէկ դանի... Ես Տիրացու անձն անարժան... յերկրէն եկի այն վրաց տան, ի քաղաքէն այն պատուական, որ իր անունն է Երեւան, խորվիրապին ա հարեւան»: (Ձեռ. էջմ., 1654):

Իսկ 1341ին կը գրէ.

«Ես Տիրացու... քահանայ, ... յերկրէն եկի այն Հայաստան, ի քաղաքէն այն պատուական, որ իւր անունն է Երեւան, ու վիրապին ու էջմիածնին է հարեւան, ի լեռն ի մաւտ Սարարատեան, անդր որ տապանն է մեծ Նոյեան, ու նշխարն ի նեսն է մեր նախնեան...»: (Ձեռ. Պետ. Թանգարանի, Թ. 811. Շահազիզ, էջ 72)*:

* Այս եւ Երեւանի պատմութեան հարց այլ յիշատակարաններ, զորոնք յառաջ բերած է Շ. 72—75, 87—88, 125, 178, արմատաբար էի ես հեղինակին իմ

Գրիչս Երեւանը Վրաստանի մէջ կը գնէ, որովհետեւ այն ժամանակ Արարատեան գաղաքը վրաց տիրապետութեան տակ էր: Ուշագրաւ է հոս, որ Երեւան քաղաքական բաժանմամբ Արտաշատի գաւառին կը վերաբերի: Յաջորդ շրջանին թէ Արտաշատն եւ թէ Քանաքեռ, Կարբի եւ Սաղմոսավանք Երեւանայ աշխարհին տակ կը յիշուին, յատկապէս երբ Երեւան իրբեւ բերդաքաղաք օսմանեան, ապա պարսկական իշխանութեան վարչական կենդրոնը եղաւ. այսպէս 1577ին կը գրէ յիշատակագիր մը թէ Օսմանցիք «գերեցին զԵրեւանու գաւառ» (Ձեռ. Վենետ. Շարակնոց 12). Իսկ Գրիգոր Դարանապետի շատ յաճախ կը խօսի Երաւանայ աշխարհի մասին, անոր մասը նշանակելով նաեւ Սաղմոսավանքը:

Դարանապետի քով ուշագրութեան արժանի է Երեւանեան աշխարհի ուրիշ մէկ կողմը, այն է Սահաքի փոս: Կը գրէ Դարանապետը. «Մինչ մեք էաք յայնմ ժամանակին (1602) ի Սահաքի փոսին՝ յԵրեւանայ աշխարհին ի վանս մեծահոգեակ ուխտին Սաղմոսայ ի լուսազարդ անապատին» (37). «Գնաք... ի յԱրարատեան գաւառ[ի]ն, որ այժմ Սահաքի-փոս ասի եւ Երեւան, եւ բնակութիւն արարաք անդ ի վանս լուսազարդ Սաղմոսավանսն» (283). «Տէր Մօսէս վարդապետն բնակութիւն արար ի Սահաքի-փոսին» (291), այս ինքն Երեւան քաղաքը. «Ի Սահաքի-փոսի յԱրարատեան երկիրն կու լինէաք բնակութեամբ ի վանս Սաղմոսայ լուսազարդ անապատին» (390. Հմմտ. եւ 456): «Որ յայսմ ամի (1603) եկի յերկրէն Արարաթեանայ զոր Սահաքի փոս կոչին եւ այժմ Երեւան ասեն, որ զեռեղեցայ անդ ի լուսազարդ եւ ամենագով վանս եւ անապատս Սաղմոսայ՝ բնակելով անդ ամս երիս» (Ձեռ. Վիեննայի Միլիթ. Թ. 124. Յուլիան, էջ 410): Հ. Ալիշան, Այրարատ, 308 ծագումը կը համարի «թերեւս յանուն այնը Սահաթ թուրքի, յորմէ եւ Սահաթու երկիրն յԵրասխաձոր (Հմմտ. անդ, 56), իսկ յայլադեանց կոչէր Չուզուր-Մատ»: Անուանս կից յիշեմ քաղաքիս «հին» յորջորջումն ալ. Բջնոյ Փիլիպպոս Եպիսկոպոս 1631ին ի խնդիր ելլելով կորսուած Աստուածաշունչի մը, «բազում որոնմամբ խուզեալ գտաք, կ'ըսէ, զգանձս զայս անգին ի հին քաղաքս»:

Պաֆն Երեւան՝ բազում ժամանակաւ գերի աւարեալ ումեք իբրեւ Եթանանոք» (Իմա իբր 1560ին. Տաշեան՝ Յուլիան, էջ 260): Կար ուրեմն 1631ին ալ Նոր Երեւան մը:

Առանց տարակուսի Երեւան, որ երկու կողմերէն կ'ոտոզուէր ջրով, խրդէն հին շրջանին պարտիզաց քաղաք էր. եւ Ղազար Փարսեղի երբ կը նկարագրէր Այրարատեան գաղաքի գեղեցկութիւնն եւ բուսականութիւնը, նկատի ունէր նաեւ Երեւանը, թէ եւ յանուանէ չի յիշեր զայս, ինչպէս նաեւ զաշտին այլ ուղիքները: Ուրարտեան շրջանէ ջրանցքներու հետքերը մնացած են դեռ: Կը վկայէ Միլիթար Այրիվանցի իւր ժամանակագրութեան մէջ (էջ 73 տպ. Պատկանեան) թէ ԺԱ. դարու սկիզբը (1031—1041) Ապիրատ իշխան դարու սկիզբը Երեւանայ»: ԺԳ. դարէն «եհան գառուն Երեւանայ»: ԺԳ. դարէն ետքը, երբ պարսիկ տեղապահներ նստան Երեւան, հանուեցան նոր անունք ալ, ոտոզելու քաղաքին ներսն ու շրջակայքը: Կը պատմէ Էլիլիա Չէլչէպի, թէ Թիմուր-Լենկի օրով հրաման ստացաւ վաճառական մը շահագործելու Երեւանի շրջակայքը բրինձի մշակութեան համար: Այս միջոցին (1387) կը ներկայանայ Երեւան արդէն «մեծ աւան» եւ 1441ին «գիւղաքաղաք» (Հմմտ. Շահազիզ, 30, 70): Կ'ըսուի թէ յիշեալ վաճառականը առաջին անգամ պարսպած ըլլայ Երեւանը: ԺԶ. դարու սկիզբը Շահ Իսմայիլ (1505—1523) պատուէր տուաւ Ռեւան խանին կառուցանել Երեւանի մէջ պալատ մը եւ ամրացնել բերդերով: Պարսիկ տեղակալները, յանուանէ Շահուլի եւ Թոթմախ խաները, որոնք իրենց նիստը Երեւան ունէին, շարունակեցին նոր կառուցուածքներով ծագեցնել Երեւանը. կայ մինչեւ օրս Թոթմախ խանի լիճը, որմէ ջուր կը մատակարարուի քաղաքին Շահարի թաղամասի հողերուն (Շ., 18): Բայց յետոյ վրաց զէմ մղուած պատերազմներու ժամանակ աչքէ թողուեցան քաղաքն ալ, բերդերն ալ. այնպէս որ 1579ին, երբ Օսմանցիք տիրացան քաղաքին², անհրաժեշտ տեսան ի նորոյ ամրացնել բերդերը: Ֆէհրաթ փաշա 1582ին ձեռք դարկաւ նախ նորոգել Թոթմախ խանի ամրոցն եւ քաղաքը պարսպել նոր կառուցուածքներով: Շինուեցան 8 դէպի քաղաք եւ 43 դէպի դուրս աշտարակներ. հոն 725 եւ հոս 1726

² Քաղաքին առումը ողբացած է Յովհաննէս տաղասաց Վենետիկի Միլիթ. Մատենադարանի Ոտանաւորաց գիրք, Է., էջ 77. հրտ. Այրարատ, էջ 300—301, ասկէ Շ., էջ 31—32:

հրացանաճղութեան որմածակեր. բերուեցան նաեւ 53 թնդանօթներ: Կ'ըսուի թէ 45 օրուան մէջ աւարտեցան այս ամբողջութիւնները (Hammer, Geschichte des Osmanischen Reiches, II, 493—494): Բաղաքի տեղապահութիւնը յանձնուեցաւ Եուսուֆ-փաշայի, որ Չիքալայի որդին էր: Այս կառուցուածքներու բուն մասնակցեցաւ քաղաքի քրիստոնէայ բնակչութիւնը. բերդին համար շինանիւթ գործածուեցան նաեւ եկեղեցիներու եւ դերեզմանոցներու քարերն ու խաչքարերը: Հայ ժամանակակից յիշատակագիրներ արձանագրած են այս դէպքը. այսպէս Նոր Զուլայի Ամենափրկիչ վանքի մէկ Զեռագրի մէջ կ'ըսուի. «Ի թվականիս ՌԼԲ (1583) ամին ելաւ Ֆարհաթ փաշայն ի Ըստնպուրու ... Իջաւ ի քաղաքն Երեւան եւ փախոյց տէր երկրին զՄահմատ խանն Պարսից թագաւորութեանն... որ շինեցին ամուր բերդ»: Ուրիշ մը կը գրէ 1584ին. «Երեւան բերդ շինեցին, եկեղեցին քակեցին, շատ օծած խաչ ջարդեցին» (Շ., 87). Եւ դարձեալ. «Երեւան առաւ. խիստ սով եղաւ»:

1630ին, երբ լսուեցաւ թէ Շահ Աբաս կը քալէ Երեւանի վրայ, աճապարեցին թուրքերը միևսանգամ ամբարցնել քաղաքը. Երեւանը երեք կողմէն 500 կանգուն շրջագծով նոր պարսպեցին. 1603 Նոյեմբերին հասաւ Շահ Աբաս քաղաքին պարիսպներու առաջ. ութամսեայ պաշարմամբ առաւ քաղաքը: Եւ երբ լուր հասաւ թէ Ջղալ օղլի հօր բանակով կը յառաջէ, հրամայեց Շահը բուն դաղթեցնել Երեւանի ու բովանդակ սյրարատեան դաշտի բնակչութիւնը Պարսկաստան: Այս բուն դաղթը սղբացած են Յովհ. Մակուեցի եւ Գաւրիթ եպիսկոպոս (հրտ. Այրարատ, 301—302): Այնուհետեւ երբ տեւական կերպով Պարսից մնաց Երեւանը, Ամիրգուեայ կուսակալը աշխատեցաւ շինեցնել երկրը Կարսի եւ վանի կողմերէն բերած գերիներով:

1617ին Նոյեմբերին փորձեցին Օսմանեանք յետս գրաւել Երեւանը. 44օրեայ անօգուտ պաշարումէ մ'ետքը ետ դարձան մեծ վրասով (Hammer, Բ., 757): 1635 Յուլիս 28ին մեծ բանակով անձամբ երեւաց Երեւանի առջեւ Մուլտան Մուրատ Գ.: Նոյն տարւոյն Օգոստոս 8ին թահմազգուլիխան կը յանձնէ Մուլտանին Երեւանը. Մուլտազայ փաշա կը նշանակուի նուաճուած երկիրներուն տեղակալ (անդ, Գ., 148—151): Բայց երկարատեւ չի ծածանիր Օսմանեան մահիկը Երեւանի վրայ. նոյն

տարւոյն Դեկտեմբեր 25ին հակայարձակում կ'ընեն քաղաքին վրայ սարսիկները եւ կը գրաւեն 1636 Ապրիլ 1ին (անդ, Գ., 158—159): 1724ին Յունիս 7ին ինկաւ Երեւանը միւսանգամ Օսմանեանց ձեռքը (անդ, Գ., 223)³. դարձեալ կարճ տեւողութեամբ. վասն զի 1735ին Օգոստոս 2ին կը ստիպուին թուրքերը տեղի տալ Նատրչահի առջեւ (անդ, Գ., 313):

Այս կռիւներու մասին, որոնք տեղի ունեցան Երեւանի շուրջը ընդարձակ խօսած են Առ. Գաւրիթեցի, Արքահամ Կրետացի, Յակոբ Շամախեցի եւ ուրիշ ժամանակակիցներ: Յառաջ կը բերեմ հոս ինչ որ արձանագրած են յիշատակագիրք 1635ի պաշարման եւ յետս գրաւման մասին:

Յովհաննէս երէց ի Գանձակ Էջմիածնի թ. 713 (թղ. 58 ա) ձեռագրին մէջ կը գրէ. «Թվին Հայոց ՌՉԵին (1636) իրեկ Սոնդկարն. Ը օրուան Արեւանայ բերթն առաւ. յետ դարձաւ Շահ Մուրին բաղում հեծելօք ի վերայ բերթին. պատերազմումայ, բաղում արկնհեղութիւն այ լինում. ճորով այ առնում. վերջն Աստուծոյ է գիտելի, թէ ինչպէս կուլի: Կան հալածական քրիստոնէից ազգս ի մէջ հարկայպահանջութեան»:

Մարտիրոս գրիչ յԱզուլիս կ'արձանագրէ սողերս Երեւանի Պետ. Թանգարանի թ. 621 ձեռագրին մէջ. «Ի մեծ թվականութեանս Հայոց ՌՉԳն... եկն զրոյցս փօթալիրս, եթէ գա թագաւորն Հոռոմոց ի վերայ Պարսից մերս թագաւորի Հ բիւրովք. որ եւ եկն իսկ երկիրն արարատեան եւ պատեալ զգղեական Երեւանու նստաւ: Եւ աշխարհս բնաւ տեղաշարժ լեալ... Թերեւս կարիցեն զինքեանս ապրեցուցանել... Առեալ լինէր զղեակն այն, զոր ասեն եթէ ի կատարել է աւուրց ետուն կամաւ իւրեանց զամբոցն՝ վասն ոչ լինելոյ կարող ընդդիմանալ նմայ: Գանդի յերանել զօրացն Պարսից ի գլուխ զղեկին յազադս պատերազմի՝ զյորովայնս նոցա արկն փոխեալ լինէր վասն տեսութեան անհուն բանակացն Օսմանից: Եւ ի առնել զղեկին՝ կզ անդ զմի ի ծառայից իւրոց, որոյ անունն Մուրթազայ փաշայ ստորոգիւր, բաղում ընտիր զօրօք եւ զսյարսիկ խանն թահմազգուլի գերի ածեալ առաքեաց յաշխարհն իւր: ... Յետ սցսոցիկ եւ թագաւորն Պարսից արարեալ ժողով զօ-

³ Երեւանի Կոնդի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ ձեռագիր Աւետարանին մէջ կ'ըսուի 1724ին. «Առեալ եղև Օսմանցին ի բերթն Երեւանայ եւ շատ կանայք եւ մանկանք գերեցան եւ բաղում մարդիկ մեռան»:

րաց իւրոց եկն եւ նա ի վերայ գղեկին Երեւանու. եւ նստաւ ի վերայ նորա իբրեւ ամիրս Ե. եւ սայ եւս ժողովեալ ազգ քրիստոնէից վասն իւրոյ օգնականութեան. որ եւ անդ զբաղումս ի մերս սեռից ի զղեկէ անտի սպանեալ մեռան...: Եւ ի մուտ վեցերորդ ամսոյն առեալ եղև դարձեալ ի Պարսից զամբոցն վասն քաղաքէս մարտի նոցա՝ ի ձեռացն Օսմանից: Իսկ փաշայն Մուրթազայ սրտակտուր եղեալ ներ զղեկին սատակեցաւ. եւ գերիս մնացեալ փաշայն փոխանակ իւրոյ խանին գերի վարիւր. եւ զմնացեալ զօրսն սուր ի վերայ եղեալ կոտորեաց: Եւ ինքն բաղում ուրախութեամբ դարձաւ յաթոս իւր ի քաղաքն Շօշ»:

1735ին Նատր շահ «հրամայեաց զերեքհարիւր տունս յերկրէն Երեւանայ արտահանել եւ տանել ի Սորասան ի Մաշադ քաղաքն» Յակոբ Շամախեցի. Ձեռ. Պետ. թանգ. 835:

Յամի 1755 «խանն մեր Երեւանու Հիւսէին Ալի կոչեցեալ՝ ապստամբելով ի յԱզատիսն սարտարէն՝ զորոյր երկիրս Երեւանու՝ զամենայն դտաճիկ եւ զՀայսն քեօչեցոյց եւ տարաւ ի Ղարս մեծաւ տառապանօք. յորում միջոցի մնաց միայն սուրբ Աթոսս միաբանիւք ի կայի. որ տեւեաց յամիսս վեց եւ սպա դարձան ի տեղիս իւրեանց»: Ձեռ. Երեւանի Պետ. Թանգարանի թ. 676, թղ. 210 ա:

Այս տարեգրական պատմութեան կից կրնանք խօսիլ նաեւ քաղաքակրթական հաստատութիւններու վրայ, որոնք քաղաքին մշակոյթի զարգացման նպաստեցին: Կը յիշուին քաղաքին մէջ եւ շրջակայքը «վանքեր», «անապատներ» եւ եկեղեցիներ, սկսեալ ԺԵ դարէն:

Հետեւեալ տեղիքը, զոր կը կարդամ վեներտիկի Միխիթարեանց թ. 265 ձեռագրին մէջ (թղ. 387 ա. հմմտ. Սարգիսեան, Յուցակ, Բ., 854), գրուած 1317ին, հաւանօրէն Այրիվանքը կ'ակնարկէ քան Երեւանը. «Գոզիկ ոմն անուն միայնակեաց յերիվանս՝ երաժիշտ լեալ, ասն թէ Մեսեղիքն եւ զԱռաւօտու երգերն նա արարեալ է»:

Կային Երեւանի մէջ արդէն հին ժամանակները քարաշէն եկեղեցիներ. անոնց մէջ հնագոյնն էր հաւանօրէն այն վանքն եւ եկեղեցին, որ կ'ըսուի թէ Անանիա առաքելոյն գերեզմանի վրայ կառուցուած է (այժմ կոչուած Զօրաւոր): Այս տեղ՝ «յերեւան անապատիս... ընդհովանեաւ Սուրբ Առաքելոյ գերեզմանին» օրինակած է Յովհաննէս երէց 1440ին Աւետարան մը, որ ապա նուիրուած է

Մշոյ Ս. Սարգիս Եկեղեցւոյն: Ուշագրաւ է բացատրութիւնը՝ «յերեւան անապատիս»:

Մարգար դպիր Երեւանցի 1537ին կ'օրինակէ Պարսիսի Ազգ. Մատենադարանի թ. 59 Մաշտոցը, «ի յերկիրս Սարարադեան, ի քաղաք Երեւան, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածամի, Սուրբ Յարութեան, Սուրբ Երկու Երեսմի, Ս. Նշանի, յառաջնորդութեան տէր Զաքարիայի եւ տէր Համազասպայ, ի դանութեան Թաւրէժ Թաղթին Թահմազ փառաշին»: Այս չորս եկեղեցիներէն Ս. Յարութիւնն եւ Ս. Նշանը այլուստ անձանօթ կը մնան; Եթէ Ս. Նշանը նոյն է «Երեւան անապատին» հետ, որ հոս է յիշատակուած:

Լսեցինք վերագոյն թէ Երեւանի եկեղեցիներէն մին, որ կը դտնուէր քաղաքի այն մասին մէջ, ուր 1583ին բերդ կանգնուած էր, քանդուած է բերդի շինութեան ժամանակ. թերեւս Ս. Յարութիւնը ըլլայ այն: Անոր փոխարէն շինուած է հաւանօրէն Կաթողիկէ խորէն շինուած է հաւանօրէն Կաթողիկէ եկեղեցին, որ կը յիշուի ԺԵ. դարէն սկսեալ: Հոս կը նստէր Մեղքսեղեկ կաթողիկոս, ժամանակ մ'ալ Մովսէս Վ. Տաթեւացի:

Ս. Անանիայի գերեզմանին վրայ շինուած Անապատը 1620ին արդէն քայքայուած եւ լքուած էր. զոր ապա ձեռնարկեց նորոգել Մովսէս Վ. Տաթեւացի, Ամիրգուեայ խանին հրամանով, եւ մենաստան կարգեց: Յառաջ կը բերեմ այս տեղ ինձ ծանօթ քանի մը յիշատակարաններ. որոնք կը հային Երեւանի եկեղեցիներու պատմութեան:

Մկրտիչ գրիչ 1631ին կ'օրինակէ Սաղմոսարան մը «ի յերկիրս Արարատեան, ի քաղաք Երեւան, ի տեղապահութեան Թահմազ գուլի խանին, ընդ հովանեաւ Ս. Կաթողիկոսի եւ Ս. Աստուածածնիս եւ Ս. Երկու երեկէիս» (Տաշեան՝ Յուց. Բերլ. 35): Նոյն Մկրտիչ երէց 1646ին կ'օրինակէ Փիլոնի գրութիւնները «ի քաղաքին յերեւանայ ընդհովանեաւ Ս. Կաթողիկէին» (Ձեռ. էջմ. 2056): 1658ին կը նորոգուի Գր. Տաթեւացւոյ Գարողազիւրքը «յանապատս Երեւանայ, առ շիրմին նշխարաց մեծի առաքելոյն Անանիայի, ի կաճատս բազմակոյտ եղբարց սրբազանից» (Պալեան, Յուց. Ս. Կարապետի վանուց, թ. 8): 1665ին Աւետիք երէց յանձնարարութեամբ Առաքել Դաւրիթեցւոյ կ'օրինակէր անոր Պատմագիրքը «ի մայրաքաղաքս Երեւան, ի դուռն սուրբ եկեղեցւոյս, որ անուանի Կաթողիկէ» (Ձեռ. վիեննայի Միխիթ. Մատ. թ. 137, Տաշեան՝ Յուցակ, էջ 433): 1671ին Անանիա Գառնեցի

կը ստանայ էջմ. 2446 «ի յԱյրարատեան (աշխարհի) ի խանութեան Աէֆուզուլի կաշի», որ գրուած էր «ի մայրաքաղաքն Երեւան, ի դուռն Ս. Կաթողիկէին եւ Սուրբ Երկու Երեսու եւ Ս. Սարգսի գորավարին»:

1688ին եւ 1689ին Ստեփանոս Երեւանցի կ'որինակէ էջմ. 687 եւ 1101 ձեռագրները «ի դրան սուրբ Երկու Երեսոյ»: Եկեղեցիս Երեւանի հնագոյն եկեղեցիներէն մէկը կ'երեւայ. Գրիգոր Գարանապետի խօսելով 1638ին թուրքերէն այրած Եղիվարդի վանքի մասին, կը գրէ թէ «գարմահալի շէնք ունէր... Երեւանու Երկերեսին կու նմանէր» (էջ 579): ԺԸ. դարէն ետքը չեմ հանդիպիր Եկեղեցւոյս յիշատակութեան. յայտնի չէ նաեւ անոր տեղը:

Ալիշան, Այրարատ 315 յտառը կը բերէ ժԸ. դարու յիշատակագրի մը խօսքերը, որ կը յիշէ «գիտաւոր եւ դամենապետու շէնքի Նոր Երեւանայ որ կու յի Ս. Ամենափրկիչ եւ Ս. Ստեփանոս»: Ինձ կը թուի թէ հոս խօսքը Նոր-Չուղայի Երեւանեան թաղի մասին է:

Էջմիածնի Թ. 1534 Յայտաւորքի յիշատակարանին մէջ, գրուած 1695ին, գրիչը խօսելով Եղիվարդի կաթողիկոսի շինարարական գործունէութեան մասին կ'ըսէ ի մէջ այլոց: «Նոր ի հիմանէ հաստատեցին զանապատն Չուղազեղու եւ կառուցին երկուս տաճարս հրաշագեղս յանուն Ս. Գեորգիայ գորավարին եւ Ս. Յակոբայ Մըքրնայ հայրապետին. եւ յօրինեցին անդ եւս շինուածս բազումս. եւ հաստատեցին միաբանս եւ այլ բազում շինուածս եւ աշխատանս արարին յամենայն տեղիս: ... Այլ եւ գտահարս անապատին Անանիայի առաքելոյն որ ի միջի այգեացն Երեւանայ քաղաքին, նոր վերստին ի հիմանէ կառուց (Եղիվարդ) ամենայն շինուածօքն որ ի նմա: Նաեւ գերկու եկեղեցիսն քաղաքին Երեւանայ, այսինքն գերկու երեսին կոչեցեալ եւ գլխառնիկէ անուանեալ, որք ի շարժմանէն ի հիմանէն ի սպառ բլեակը էին, վերստին ի հիմանէ կառուց գեղեցիկ շինուածօք»:

Անապատի եկեղեցւոյ կործանման դէպքը այսպէս կը պատմուի էջմ. 1796 ձեռագրին մէջ. 1689ին Յուսէիս 4ին մեծ երկրաշարժին «Ստեփանոս բարունին (Պոռչեանց տոհմէ, առաջնորդն Այրիվանից) էր ի մայրաքաղաքն Երեւան, ի յանապատն սուրբ. եւ ի հասարակաց ճաշու աղօթս կատարէին հանդերձ միաբան ուխտին. յայնմ ժամու շարժեաց եւ քակտեցաւ եկեղեցին. էտա դտակ զեպիսկոպոսն զՍտեփաննոս եւ զքաջ հուստորն. եւ անախ փոխեցաւ առ Քրիստոս»:

Կաթողիկէին կից իբր 1780ին շինուած է Վարժարան մը. էջմիածնի Թ. 1426 ձեռագրին մէջ (Մեկնութիւն Հին եւ Նոր Կաթողիկոսաց) կը կարգաւ յիշատակագրութիւնս 1781 Դեկտեմբերէն. «Յիշատակ է Դաւիթ սրբազան կաթողիկոսին ի դուռն Երեւանու Կաթողիկէ եկեղեցւոյ նորակերտ վարժարանին ի թուին 1230 եւ ի Դեկտ. ամսեանն»:

1679ին, Յուսէիս 4ին սաստիկ երկրաշարժ մը կը սասանէ Երեւանը, որուն հետեւութեամբ «բլաւ քաղաքն Երեւան հանդերձ բերդով եւ պարսպաւ. կործանեցան տունք եւ ապարանք գեղեցիկաշէնք. քակեցան եկեղեցիք եւ վանորայք»: Շարժին մանր ներարդրութիւնն տուած են Չաքարիա Սարկաւազ (Բ., էջ 104) եւ էջմ. Թ. 34 (տե'ս Ծ. 125—126), Վիեննայի Թ. 32 (Տաշեան, Յուլայի, էջ 183 եւ Բանասէր, 1902, էջ 131—132), էջմ. 1512, Թղ. 559 ր եւ Չաքարիա Ագուլեցի (Ծ. 126—127): Ողբերգած է նաեւ աչքի Սաֆարօղլի. յտառը կը բերեմ վերջոյս ողբը Վիեննայի Միխիթ. Մատենադարանի Թ. 412 ձեռագրէն (Թղ. 75 ա—76 ր):

Աչքիվարայ ասացեալ ի Սաֆարօղլու՝ ի վերայ քաղաքին Երեւանայ. Երկինքըն թունտ առաւ դեռնինըն գոռաց, Անգունդքէն վեր եկաւ ջուրն Երեւանայ: Երկինքըն շարժ ելաւ մեղաց պատուհաս ելաւ, Փառն ու զոչումն դուռն Երեւանայ: Բակվաւ պաղաղ, տունը փլաւ չուկանին, Պատարազ կանգնեցան զանկայձայնին, Սոսովանքը հաւուց այն տէր կենդանին. Աստուածուցը եկաւ սուրն Երեւանայ: Հայրը կորուցեր է, չգտաւ մայրն. Երկնուցը դէմ առաւ իրահու գարը, Մանուկներուն վրան դրին սալ քարը, Յետեւանքը կու լայ քուրն Երեւանայ: Եղնիկները բերին դրբին ի ծառը, Կուլայ կը փնտրուէ չի գտնուլ փառը, Փակվաւ էքէստանը, շրջեցաւ ծառը, Հրեշտակը կպուց թուրն Երեւանայ: Կոստյաշտ են դարձեր եւ ծեր ու աղայ, Մեղաց պատուհաս է՝ գետին կու խաղայ. Մէջ հողին մնացին պարոն ու աղայ, Չեն առնուլ Աստուծոյ հուրն Երեւանայ:

Աչքիվարայ ասացեալ ի Սաֆարօղլու՝ ի վերայ քաղաքին Երեւանայ.

Երկինքըն թունտ առաւ դեռնինըն գոռաց, Անգունդքէն վեր եկաւ ջուրն Երեւանայ: Երկինքըն շարժ ելաւ մեղաց պատուհաս ելաւ, Փառն ու զոչումն դուռն Երեւանայ:

Բակվաւ պաղաղ, տունը փլաւ չուկանին, Պատարազ կանգնեցան զանկայձայնին, Սոսովանքը հաւուց այն տէր կենդանին. Աստուածուցը եկաւ սուրն Երեւանայ:

Հայրը կորուցեր է, չգտաւ մայրն. Երկնուցը դէմ առաւ իրահու գարը, Մանուկներուն վրան դրին սալ քարը, Յետեւանքը կու լայ քուրն Երեւանայ:

Եղնիկները բերին դրբին ի ծառը, Կուլայ կը փնտրուէ չի գտնուլ փառը, Փակվաւ էքէստանը, շրջեցաւ ծառը, Հրեշտակը կպուց թուրն Երեւանայ:

Կոստյաշտ են դարձեր եւ ծեր ու աղայ, Մեղաց պատուհաս է՝ գետին կու խաղայ. Մէջ հողին մնացին պարոն ու աղայ, Չեն առնուլ Աստուծոյ հուրն Երեւանայ:

Շարժ ելաւ ու թուաւ սուն ու գերանը, Ջարդեցաւ մէջը ու պէջքը, աչքն ու բերանը, Շրջեցաւ պարիսպը, փլաւ խորանը, Չարութիւնը բերեց սուրն Երեւանայ:

Շատ թաղաւոր, թաղուհի պէհմուրաւ գնաց, Մեռան սարկաւազները, զբրբերն մնաց, Մեղաց եկան խղճալով, լացին, Գուլթարը պարպեցաւ մուրն Երեւանայ:

Սաֆար օղլին նստաւ Երեւան գովեաց, Աստուած խճմ երաւ, պատուհաս տուեց, Արդար ու մեղաւոր մէկ ճանփայն ժողովեց, Չարիք է մնացեր դուրն Երեւանայ:

Բաց ի երկրաշարժի աղէտէն՝ տեսած է Երեւան նաեւ մարախի հարուածը: Արդէն 1692ին կ'ըսուի Թէ «եկն մորեխն Երեւանայ երկիրքն. փա՛ռք Աստուծոյ, փլաս ոչ եղեւ» (Տաշեան, Յուլայի, էջ 554): Բայց շատ փլաս հասցուցած է 1713ի արշաւը, զոր ողբերգած է Սարգիս Գեղամեցի հետեւեալ տաղին մէջ, զոր յտառը կը բերեմ էջմիածնի Թ. 2244 ձեռագրէն (Թղ. 23 ր—24 ա) անփոփոխ, զրէն ուղղագրութեամբ.

Ի թիվ հազար հարուր վաթսուն երկու. աւելի հետ ի նոյն. Եկաւ մարախ բազում անհուն ի քաղաքն էրիվանոյն: Ծածկեալ եղեւ երեսս աւղոյն. էհեղ յերկից իբրեւ զձիւն: Թուա իջեալ մէջ յարտերոյն. ըսկասն ուտել իբրեւ զշուն: Չարմանք եղեւ ամենեցոյն. աղաղակին դէմըս աստուածոյն. Ինչ պատոյհաս է մեր զլիսոյն. չէինք տեսաց բնաւ ի նոյն: Մահն եկաւ ի նոյն տարոյն. հաւասարեց ամէն տեղոյն. Խիստ կոտորեց մանտոյ մեծոյն. փառս տացուք ի աստուածոյն: Յաշխարհըս ամէն ցաւն պատեց. մեր մեղացեն զմեղ յատեց. Յառաջ զմեղ գրով պատմեց, չի փոնեցինք պատոյհասեց. Սոփեւ եկաւ ի նոյն: տարին խանն: շահի եղաւ: դարին. Սովաց ճարգեց գաշտոյ սարին. աստուած փրկէ եկող տարին: Մուկն եկաւ. ի նոյն տարին. հացոյ դարման յախիւր արին.

Խոտ չի մնաց բնաւ սարին էլ չի տեսնենք սոյսպէս տարին: Յաշխարհըս վերջայ իմացիք. ամեքըդ ձեր մեղքըն լացեց: Ողորմութեամբ դուք ժիր կացէք. ես պատոյհասեալ լաւ իմացեք: Չորսս եղաւ ի մի տարի. ինչ որ ունի ախիւր արի: Սուրբ յաղօթից կէնանք արի. աստուած կոյտայ ետոյ բարի. Օվ ոք կարգայ, լաւ իմանայ. հոգով մարմնով ուրախանայ. Խօստովանի, արդարանայ. արքայութեանն արժանանայ: Ես տէր Սարգիս Գեղամեցի, յոս(ան)աւորքս գրեցի. Աս տէր Յիսուս աղաչեցի. աշխարհս ոչինչ իմացի:

Իրբեւ զինուորական կենդրոն, Երեւանի բնակչութեան մեծագոյն տարրը, յատկապէս 1604ի տարագրութենէն ետքը, եղած է պարսիկ եւ թուրք: Անոնց բունցքի տակ ստրկացած էր հայ ժողովուրդը: Յովնաթան Նաղաշ ԺԸ. դարու սկիզբը կը գրէր խօսելով Երեւանի վրայ.

Մարդիքն զուլում կ'երեւան. Թուրքերըն կու քաշեն բերան, Մարդոյ զբլիսի կտրեն գերան:

Ծանր էին տնտեսական կեանքի պայմաններն ալ: Այսպիսի դրութեան մէջ կարելի չէր բնակամարար ակնկալել հոն գրական շարժում մը: ԺԷ. դարու սկիզբը փորձեց Մովսէս Վ. Տաթեւացի Անապատին մէջ ստեղծել գրական կենդրոն մը, բայց քիչ յետոյ, երբ ընտրուեցաւ ինքը էջմիածնի լուսարար եւ ապա Կաթողիկոս, հոն կենդրոնացուց բոլոր ոյժերը, եւ այսպէս Երեւանի Անապատը տկարացաւ դարձեալ:

Միակ աշխատութիւնը, որ ծանօթ է ինձ իբրեւ գրական արտագրութիւն Երեւանի, այն «Մտաց Բանալին» է, որուն համար կ'ըսուի թէ եթովպացեղէնէ թարգմանուած է 1688ին Երեւանի «քարվանսարայի» մէջ: Այս գործը, որ կը պարունակէ 37 մանր պատմուածքներ, պահուած է էջմիածնի Թ. 1058 ձեռագրին մէջ (Թղ. 25 ա—46 ա), հետեւեալ խորագրով. «Գիրք որ ասի Բանալի մտաց. թարգմանեալ ի յեթովպացւոց որ է Հապաչեցւոց ի Կարապետ վարդապետէ. եւ ջանիւք եւ աշխատու-

թեամբ ումեմն քահանայի Յովհաննէս պիտա-
կանուն կրօնաւորի, գոր որը ընդհանուր արեղայ
ասի, ի յԵրեւան քաղաքի ի մէջ վաճառակա-
նաց զոր քարվանսարայ անուանի ի թվ. ՌՃՂԷ
(1688) եւ նոցին ՌՃՂԷ»: Կը սկսի այսպէս ·
«Պատանեակ ոմն Յովհաննէս անուն որդի միա-
մօր եւ յոյժ մեծատուն...»:

ԺԸ. դարու սկիզբը «ես էլ Երեւան շատ
կացայ» կը գրէ Յովնաթան Նաղաշ: Հոս պա-
րագած էր Յովնաթան նկարչութեամբ: Գրած
է զուարթ բնաւորութեամբ տաղեր ալ, ի մէջ
այլոց «Գովասանութիւնն Երեւանայ քաղա-
քին» (հրտ. Չօպանեան, էջ 95—96) եւ տա-
ղերն «վասն կանանց» (Չեռ. Թ. 537, թղ. 43
բ եւ 70 ա վիեննայի Միխիթ. Մատենագա-
րանի), ուր կը ձաղէ Երեւանի կանանց աւե-
լորդապաշտութիւնները: Յովնաթանի տա-
ղերը, որոնք մեծաւ մասամբ Երեւան գրուած
են, չափազանց հետաքրքրական են քաղաքի
նիստ ու կացի նկարագրութիւններովը:

Յիշենք ի վերջոյ Աշող Զիւանիի գովքն
«Երեւան քաղաք» (Երգեր, Աղեքսանդրապօլ
1893, էջ 22—24) · ուր տակաւին հին Երեւանն
է գննութեան առարկայ:

Կրնայինք դեռ ընդարձակել մեր տողերը,
եթէ ուղէինք մի առ մի յիշել Երեւան օրինա-
կուած ձեռագիրներն եւ Երեւանէն դուրս ելած
մարդիկ, որոնք տարաշխարհիկ ցրուած են
զանազան ուղղութեամբ. այսպէս Յակոբ
Լալիսկոպոս Երեւանցի կը գրէ թէ 7 անգամ
ուխտաւորութեամբ այցելած է Երուսաղէմ,
վերջին անգամ 1599ին (Աղանունի, Միարանք
եւ Այցելուք հայ Երուսաղէմի, 316), սա նոյն
է հաւանօրէն այն Յակոբ Լալիսկոպոսին հետ,
որ 1601ին կը գտնուէր Հոմմ, 80ամեայ հա-
սակին (Ալիշան, Այրարատ, 316):

Հ. Ն. ԱԳՆԵԱՆ



J. Baltrusaitis, Études sur l'art médiéval en Géorgie
et en Arménie. Leroux 1929, 4°, p. XV + 105
et CI planches*.

J. Baltrusaitisի գիրքը՝ բոման ճար-
տարապետութեան վրայ հետաքրքիր գործ
մ'ըլլալէ զատ, նաեւ վրական եւ հայկական
արուեստներու մասին յոյժ շահեկան ուսում-
նասիրութիւն մըն է:

* Գրախօսականի սկզբնագիրը գաղղիերէն է. հե-
ղինակին ձեռագրէն քարգմանած է Հ. Պ. Սամուէլեան:

Երկասիրութիւնս լոկ երկրորդաբար Հայ-
աստանով կը դրաղի, անոր չորս գլուխներէն
երկուքը՝ Վրաստանի վրայ կը խօսին, իսկ
վերջին երկու գլուխները Վրաստանով եւ
Հայաստանով միանգամայն կը դրաղին:

Կիրարկուած յօրինուածութիւնը սեղմ
վերլուծութիւն մըն է (ինչ որ ստիպած է հե-
ղինակը նորանոր աստութիւններ կերտելու),
վերլուծութիւն մը ի հարկէ տեղւոյն վրայ
կատարուած եւ սկզբնական վաւերաթուղթե-
րու վրայ հիմնուած: Այսու հանգեւրձ յըն-
թացս գործին սպրդած են մերթ կանխահաս
ընդհանրացումներ եւ մերթ դադարներ,
որոնք առանց բաւական քննական հիման են:

Վրական ճարտարապետութեամբ զբա-
ղող գլխուն եզրակացութիւնն ա'յն է թէ այդ
ճարտարապետութիւնը ո'չ այնչափ շինուած-
ային հաւասարակշիւթիւն մը, ո'րչափ
ստեղծագործական (plastique) արժէք մը կը
ներկայացնէ: Այս միեւնոյն եզրակացութիւնը
կը մերձեցնէ հեղինակը նաեւ հայկական շի-
նութիւններու, որոնք սակայն մինչեւ այսօր
էտպէս կերտուածային, հետեւողական ա-
րուեստի արտայայտութիւններ ընդունուած
էին, ա'յնպէս որ շինութիւններու բարձրու-
թիւնէն կախում ունէր յատկապէս ինքնին ·
— հայկական ճարտարապետութեան յատկա-
նշական գիծն է զարդագործական պարզու-
թիւնը:

H. Faucillon, որուն հովանաւորութեան
տակ գործը լոյս կը տեսնէ, իր աշակերտին
տեսակէտին համակարծիք չ'երեւար: Իր յա-
ռաջարանին մէջ հաստատելէ վերջը թէ «հայ-
կական արուեստ, վրական արուեստ միեւ-
նոյնը չեն», հեղինակին ընդհանուր եզրակա-
ցութիւնը այսպէս կ'ամփոփէ: Բազրատունեան
արուեստը, գոնէ Վրաստանի մէջ, չէ կա-
րելի ասիական բոման արուեստ կոչել: Ընդ-
գծուած սահմանափակումս, որով Հայաստան
կ'ակնարկուի, նոր հաստատութիւն կ'առ-
նու նախարանին ուրիշ մէկ տեղիքովն, ուր
կ'ըսուի. ԺԱ. դարուն վերջերը Հայաստանի
մէջ կը կիրարկուէին շինութեան ձեւեր, որոնք
նոյն դարուն ուրիշ տեղ իբր լոկ հնարագի-
տութիւն երեւան կու գան: Փրանկներն արդէն
նոյն ատեն ծանօթ էին այն ձեւերուն¹:

¹ Պր. Բառմաջեան, ուսումնասիրութեանս վրայ
իր մատենախօսութեան մէջ այս թուականը ա'լ աւելի
յետս կ'ընկրկէ, Journal Asiatique, Յուլիտ—Սեպտ.,
1930, էջ 180, բայց ուրիշ ո'րեւէ վերապահութիւն
չ'ըներ:

Եթէ Պր. Faucillon Ստրէիգովսկիի հե-
տեւելով՝ հայկական արուեստը կը նկատէ
«եթէ ո'չ էական տարբերու տարածող, դոնէ
ինքնակաց ուրոյն կենդրոն մը օժտուած ճա-
ռագայթելու մեծ կարողութեամբ մը», ո'վ
կ'երաշխաւորէ թէ խնդրական չեն բոման ճար-
տարապետութեան մասին մէջ բերուած այն
եզրակացութիւններն ալ, զորս Բալտրիւզաի-
տիս վրական արուեստը ուսումնասիրելով
ձեռք բերած է:

Օր. F. Henry² իր նորընծայ երկասիրու-
թեան մէջ Բալտրիւզաիտիսի³ համակարծիք է
գտած ըլլալով ինչ ինչ նմանութիւններ իրլան-
դական քանդակործութեան կերտած խաչե-
րուն եւ հայ խաչքարերուն միջեւ:

«Կան ժողովուրդներ, որոնք ճարտարա-
պետական ոյժերու հետեւողական խաղին ան-
ճանօթ են, որոնք կը կերտեն անյօդ քարե-
րով, որոնց վրայ կը տարածեն զարդաձեւե-
րու ցանց մը: Այս՝ հայերու եւ իրլանդացի-
ներու հասարակ է, եւ եթէ հայկական զար-
դաձեւեր, որոնք իրլանդա մուտ գտած են,
հոն ընդ երկար տեւած բաւած են, հաւանա-
բար պատճառն ա'յն է որ անոնք համապա-
տասխանած են մտքերու բնածին մէկ ձգտու-
մին, հասոյական երեւցած են աւելի քնարեր-
գական քան շինողական երեւակայութիւննե-
րու եւ անոնց բաւականութիւն տուած են»
(էջ 177):

Ահա այս հոգեբանական խորհրդածու-
թիւններու կը յանդի Օր. Henryի գրչին տակ
այս կարեւոր գրութիւնը, որ որչափ կ'երեւի
սխալ է եւ կ'արժէ որ հայ ճարտարապետու-
թեան մասնագէտներ անով հետաքրքրուին:

Պր. Բալտրիւզաիտիսի գործին վրական եւ
հայկական արուեստով զբաղող երկու գլուխ-
ներէն մին հիւսազարդերու (entrelacs) վրայ
կը խօսի: Անոնք շատ կանուխ զարեւելն
սկսեալ լայն տեղ մը կը զբաւեն հայ՝ մա-
նաւանդ խաչքարերու արուեստին մէջ, եւ
Ժ. դարու մնացորդ Անիի մայր-եկեղեցոյն
մէկ պատուհանին շրջանակը՝ հանդուցեալ թո-
րամանեանի մէկ կլիշէի վրայէն, բացառիկ

² F. Henry, Sculpture Irlandaise pendant les douze
premiers siècles de l'ère chrétienne. Leroux 1933, 145
figures et 171 pl. hors texte.

³ Օր. Henry, ի հաստատութիւն գրութեանս ի մէջ
կը բերէ Անիի պալատական մատրան սիւները, որոնք
քանակիւնի սիւներուն (pilastre) անկիւններուն,
ցցուակներով (moulure) մատնանշուած են, ինչպէս
նաեւ խոյակները, որոնք մարդազուլիս կ'աւարտին, էջ
176 եւ տախտ. 115, 2 նոյն գործին:

զարդական անաղարտութիւն մը ի վեր կը
բերէ (ԻԱ. տախտակ): Պր. Բալտրիւզաիտիս
իւ հիւսազարդերու գեղեցիկ վերլուծութեան
մէջ, որ խսկապէս «երկրաչափի» եւ «ոսկե-
րիչի» արժանի գործ մըն է, կ'ուզէ ենթադրել
թէ այս ձեւերու հիւսնալի զարգացումը արա-
բացիներէ ներշնչուած ըլլան (էջ 17): Այս
պատճառաւ ալ Բերքէրիտանի եւ Եգիպտոսի
մէջ համեմատութեան եզրներ փնտռելու կ'ել-
լէ: Սակայն գիտնալու է որ արաբացի աշ-
խարհակալներ ո'չ մի զարդական օրինակ Հայ-
աստան չբերին, ընդհակառակն անոնք պար-
տեալներու արուեստն է որ իւրացուցին. իսկ
Հայաստան արաբական տիրապետութեան ժա-
մանակ Դամասկոսէն եւ Բաղտատէն է որ կա-
խում ունեցած է: Ուրիշ կողմանէ ալ քաջա-
ճանօթ է որ իսլամ աշխարհի մէջ արուես-
տագիտական շարժումը արեւելքէն դէպի ա-
րեւմուտք ընթացք առած է: Այս իսկ պատ-
ճառաւ վերոյիշեալ ազդեցութեան հետքերը
Սիւրիայի եւ Միջագետքի մէջ փնտռելու է,
ուր իսլամական յիշատակարանները անհա-
մեծատ աւելի լաւ պահուած ըլլալու են քան
Հայաստանի քրիստոնէական դարուն յիշատա-
կարանները: Բայ աստի դիտել կու տամ որ
Քալիֆուանի մէջ Թ. դարէն մնացած Սիլի
Օթրա մզկիթին հիւսազարդքը, որոնք Բալ-
տրիւզաիտիս կ'ուզէ ակնարկել, ո'չ միայն
նախնական հանգամանք մ'ունին, այլ եւ G.
Marçaisի կողմէ իբր քրիստոնէական արու-
եստի ծնունդներ կը նկատուին⁴:

Յայս վայր իմ գլխաւոր տարակարծու-
թիւններս մէջ բերելէն վերջը, կ'ուզեմ մաս-
նաւոր կերպով գնահատել Պր. Բալտրիւզաի-
տիսի մատուցած ծառայութիւնը, այնու որ
նա կը ծանօթացնէ մեզի ցայժմ անտիպ մնա-
ցած յիշատակարաններ, ինչպէս նաեւ աւելի
ընթեռնել յիշատակարաններ: Հիւսազարդե-
րու վրայ գրած գլխուն մէջ, որ ազգային տե-
սակէտէ աւազ կարեւորութիւն ունի, մերադ-
նեայ զարդագործ արուեստագէտներուն վեր-
լուծող ողին կարկառուն կը պայծառացնէ,
որոնց կերտուածքները, թէպէտ աւելի փոքր
չափի վրայ եւ նուազ բարձրաքանդակ քան
վրականները, սակայն աւելի միատարր կեր-
պով յղացուած արտադրութիւններ են:

Կը մաղթենք, որ հրատարակութեանս

⁴ G. Marçais, Sur l'art musulman du IX siècle
en Tunisie, Actes du Congrès d'Histoire de l'Art de
1921, Paris 1923, tome I, p. 286 et pl. 14.